

Քննադատություն

Օգտապաշտությունը, իր որոշ առաւելութիւններու կողքին, սկզբնական շրջանէն սկսեալ, նկատի ունենալով անոր կարգ մը դժուարութիւնները, ենթարկուած է խիստ ժխտական քննադատութեան:

Օգտապաշտութեան առաւելութիւններու կարգին պէտք է յիշել անոր չորս հիմնական սկզբունքները, որոնք տեսականօրէն գոնէ դրական կը նկատուին: Ասոր կողքին, օգտապաշտութեան տեսութիւնը հիմնուած է զուտ բանականութեան վրայ եւ անկախ է որեւէ բնագանցական ազդեցութիւններէ:

Ստորեւ, օգտապաշտութեան տեսութեան, որոշ չափով ժխտական քննադատութիւնը, հակիրճ ձեւով.-

- Քանի որ, օգտապաշտութեան հիմնական սկզբունքը մարդկային վարմունքներու հետեւանքը կամ հետեւանքներն են, ուրեմն (ինչպէս նշեցինք) նոյնիսկ բարոյական վարմունքները (Moral actions), ըլլան անոնք *բարի ու ճիշդ* կամ *չար ու վատ*, կեդրոնական հետաքրքրութեան առարկայ չեն դառնար:
- Նոյն (վերոյիշեալ) պատճառով կ'անտեսուին նաեւ այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի զգացումները (օրինակ՝ համակրանք կամ կարեկցութիւն), ինչպէս նաեւ անհատի կամ ենթակայի նկարագիրը եւ անոր հետ առնչուած՝ բարոյական արժէքներն ու առաքինութիւնները (օրինակ՝ արդարութիւն, չափաւորութիւն, խոհեմութիւն, իմաստութիւն, եւայլն...):
- Օգտապաշտութեան վարմունքի հետեւանքի *օգուտը*, որպէս երջանկութեան եւ հաճոյքի չափանիշ, ժխտական քննադատութեան արժանացած է, որովհետեւ անոնց առաւելագոյնի հանգամանքը կը յանգի՝ երջանկապաշտութեան (Eudaimonism) ու հաճոյապաշտութեան (Hedonism), որոնց մէջ ծայրայեղ եսասիրութիւն (Egoism) մը կը նկատուի:
- Օգտապաշտութեան պարագային յիշեալ *օգուտը* կը ներկայանայ, որպէս միակ արժէք, բան մը որ միապաշտական (Monism) բնոյթ կը կրէ, մինչ ներկայ ընկերային հասարակութիւնը կ'ապրի բազմարժէքեան դրութեան մը մէջ, ուր օգուտի ու երջանկութեան կողքին բարոյական այլ արժէքներ ալ գոյութիւն ունին, ինչպէս օրինակ հաւասարութիւն, արդարադատութիւն, արժանապատուութիւն, ընկերային ապահովութիւն, ազատութիւն, եւայլն ...:
- Հարց է նաեւ, նոյնիսկ վարմունքի հետեւանքները: Արդեօք նկատի պէտք է առնուին միայն դիտաւորեալ կամ նպատակադրեալ հետեւանքները, թէ անոնց վրայ պէտք է աւելցնել՝ նաեւ առանց դիտաւորութեան յառաջացած կամ չնախատեսուած դրական կամ բացասական հետեւանքները: